

Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ Ս. ԳԵՎՈՐԳ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

1993 թ. հունվարի 19-ին, համաձայն հին տոմարի, Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցում, Ս. Ծննդյան և Աստվածահայտնության տոնի կապակցությամբ, պաշտվեց սուրբ պատարագ: Պատարագեց Վիրահայոց թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը:

Մարդաշատ էր եկեղեցու բակը: Կարծես Թբիլիսիի ողջ հայությունը, թվով 200 000, եկել էին ստանալու սրբազան առաջնորդի օրհնությունը և հաղորդվելու մեր Փրկչի Մարմնին և Արյանը: Ընթերցումներից հետո Տ. Նորայր քահանա Կ.ուլանջյանը ընթերցեց Հայոց Կաթողիկոսի՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Առաջինի, ապա Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ի ուղերձները՝ ուղղված Վրաստանում բնակվող հայ ժողովրդին և առաջնորդին: Պատարագի վերջում սրբազան առաջնորդը ժողովրդին ներկայացրեց հոգևոր ճեմարանի ուսանողներին, որոնք մասնակցում էին տոնակատարությանը՝ օրհնելով և բարեմաղթություններ կատարելով:

Ապա ժողովրդին դիմելով խոսեց հավուր պատշաճի քարոզը, որում ի մասնավորի ասաց. «Նվիրական այս պահին շնորհավորում եմ ձեզ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առթիվ:

Ձեզ և մեզ մեծ ավետիս.

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Ընդունեցեք մեր սրտագին բարեմաղթությունները և Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի օրհնությունները ձեզ բոլորիդ, Աստվածակառույց տաճարից Ս. Էջմիածնի:

Թող մանկացյալ Փրկիչը Բեթղեհեմի Սուրբ Մսուրից իր բեղուն օրհնությունները ցոլացնի ձեզ վրա: Լինեք քաջառողջ, ունենաք երկար կյանք: Բեթղեհեմի Աստղը առաջնորդի ձեզ դեպի անխախտ և ամուր հավատքը մեր նախնիների»:

ԱՆԴՐԱՆԻԿ ՍՐԿ. ԺԱՄԿՈՉՅԱՆ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՔՃՅԱՆ

Ի. ՊՈԼՈՒ Տ. ԳՈՐԵԳՅՈՆ ԺՅՈՎՅՏՈՒ ՂՎԵԳՅՈՆ ՀԱՅԷՈՆ ՂՈՇՈՒԺՅՈ ԷՈՆ ՀՈՒՏՈՒՆՈՇՅԱՉ
ԽԱՅԶՂՂՈՒՀՈՅՍԻԳԵՍ ՂՈՔՎՏՈՈՅՇՅՈՒԺ ԷՈՆ ՀՈՒՏՈՒՆՈՇՅԱՉ